

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/3**

**7 նոյեմբերի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Մարինե Տերտերյանի 09.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի ժ/պ 08.09.2014 թ-ի թիվ 1008 որոշման դեմ:

#### **Քաղաքացի Մարինե Տերտերյանի գանգատում բերված փաստարկները.**

Ներկայացված գանգատով Մարինե Տերտերյանը (այսուհետ նաև գանգատաբեր) խնդրում է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի ժ/պ 08.09.2014 թ-ի թիվ 1008 որոշման կատարումը կասեցնել, քանի որ հետաքննությամբ ստացված նյութերի հետ համաձայն չէ:

Ա.թ. հունիս ամսին գանգատաբերը ստացել է ծանուցագիր 31.03.2014 թ-ին օտարված ավտոմեքենայի համար Կենտրոնի ՀՏ ԱԱՀ-ի հաշվարկ ներկայացնելու վերաբերյալ: Արդյունքում Մարինե Տերտերյանի կողմից ներկայացվել է ԱԱՀ-ի հաշվարկ, որում արտացոլվել են իրականացված գործարքի հարկվող շրջանառությունը՝ 800.000 դրամ և համապատասխան ԱԱՀ-ի գումարը:

Որոշ ժամանակ անց գանգատաբերը ստացել է թիվ 1008 որոշումը, որի համաձայն 31.03.2014 թ-ին օտարված ավտոմեքենայի ԱԱՀ-ն կազմում է 375.746 դրամ: Փաստորեն առանց իր իմացության հետաքննություն է իրականացվել և անհայտ պայմաններում վերահաշվարկվել է գործարքից բխող ԱԱՀ-ի գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է կասեցնել թիվ 1008 որոշման կատարման գործընթացը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ում առկա տեղեկությունների համաձայն Մարինե Տերտերյանը 2014 թ-ի ընթացքում 2 անգամ իրականացրել է սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի (ավտոմեքենայի) օտարման գործարք: Մասնավորապես, 1-ին գործարքն իրականացվել է 14.01.2014 թ-ին, որի ընթացքում օտարվել է ավտոմեքենա՝ գումարով 1.800.000 դրամ, իսկ 2-րդ գործարքը՝ 31.03.2014 թ-ին, օտարվել է ավտոմեքենա՝ գումարով 800.000 դրամ:

Ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով Մարինե Տերտերյանի կողմից 2014 թ-ի 1-ին եռամսյակի համար հարկային տեսչություն է ներկայացվել ԱԱՀ-ի հաշվարկ, որում արտացոլել է 2-րդ գործարքի հարկվող շրջանառությունը և համապատասխան ԱԱՀ-ի գումարը:

Այնուհետև, ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունից լրացուցիչ ստացված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Մարինե Տերտերյանը վերոգրյալ 2-րդ

գործարքի ժամանակ 2002 թ-ի արտադրության PEUGEOT 206 մակնիշի ավտոմեքենան փաստացի օտարել է ոչ թե 800.000 դրամով, այլ՝ 3400 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով: ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների համաձայն 31.03.2014 թ-ի դրությամբ 1 դոլարի փոխարժեքը կազմել է 413.31 դրամ:

Արդյունքում հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի, 9-րդ հոդվածի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ ու 24-րդ հոդվածների դրույթները Մարինե Տերտերյանի նակտամամբ լրացուցիչ հաշվարկվել է ընդամենը 375.746 դրամ (տույժերով, տուգանքով) ավելացված արժեքի հարկ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ և 88-րդ հոդվածների դրույթներով Կենտրոնի ՀՏ պետի ժ/պ կողմից 08.09.2014 թ-ին ընդունվել է թիվ 1008 որոշումը՝ Մարինե Տերտերյանից 375.746 դրամ գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում, Մարինե Տերտերյանի կողմից իրականացված վերոգրյալ 2-րդ գործարքից առաջացած ԱԱՀ-ի գումարները վերահաշվարկելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Մանվել Ավետիսյանը, որը Մարինե Տերտերյանից գնել է 2002 թ-ի արտադրության PEUGEOT 206 մակնիշի ավտոմեքենան, ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ նշված ավտոմեքենան փաստացի գնել է 3400 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով:

Հանձնաժողովի համոզմամբ, Մանվել Ավետիսյանի վերոգրյալ հայտարարությունը, ըստ էության, հիմք է հանդիսանում Մարինե Տերտերյանի կողմից իրականացված 2-րդ գործարքից առաջացող ԱԱՀ-ի գումարները 3400 ԱՄՆ դոլարին համարժեք դրամից հաշվարկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի ժ/պ 08.09.2014 թ-ի թիվ 1008 որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի ժ/պ 08.09.2014 թ-ի թիվ 1008 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

